

ԹՈՐՈՍ ՏԱՐՕՆԵՑԻ

Գրեց՝ Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

«o»

Ա. ՄԱՍ

Կարծես դուզադիպուծիւն ըլլար ժԳ դարուն վերջը եւ ժԳ դարուն սկիզբը Հայ մշակոյթի վարպետներէն մանրանկարիչ-գրիչները թորոս կը կոչուէին գրեթէ մեծ մասամբ: Օրինակ թորոս Ռաւսլին, թորոս Հոռմկլայեցի, թորոս Սարկաւազ*, թորոս Մշեցի կամ Տարօնեցի: Ասոնք ամենքն ալ մեծատաւանդ Հայ մանրանկարչութեան վարպետներ են, որոնցմէ սակայն մենք մասնաւորապէս հոս թորոս Մշեցիով կամ Տարօնեցիով պիտի զրաղինք:

*) Թորոս Սարկաւազը կան որ կուզեն նոյնացել թորոս Տարօնեցիի հետ: Թաւրիղի Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէկ աւետարանը Ծեր գրչէն, 1311-ին գրեալ ունի բազմաթիւ յիշատակութիւններ թորոսէ մը որ երբեմն ալ սակայն ինքզինքը «սարկաւազ» կը կոչէ: Դժուար չըլլար զինքը թորոս Տարօնեցիի հետ նոյնացնել, սակայն 1942-ին Նիւ Եորք ինծի ծախու առաջարկուեցաւ հրէայ հնավաճառէ մը երկու էջ առաքեալներու մանրանկարներով որոնց տակ ոսկեգիր կար յիշատակարան թորոս Սարկաւազէ: Մանրանկարներուն վատ վիճակը եւ բարձր զինք պատճառ եղան որ ցարդ չի գնեմ: Նոյն ատեն եթէ այս մանրանկարները Թաւրիղի յիշեալ ձեռագրէն չեն փրցուած ցոյց կուտայ որ կար թորոս մը որ իբր «սարկաւազ» կը սիրէր ինքզինքը վերակոչել 1311-ին: Մինչ մեզի ծանօթ Տարօնեցիի բոլոր յիշատակարաններուն մէջ ալ ոչ մէկ ատեն «սարկաւազ» կոչումի կը հանդիպինք: Ասիկա ուրեմն կը մնայ քննելի, եւ մինչեւ որ վերջնականապէս պայտցոյց մը չի գայ վճռել, ես թորոս Սարկաւազը Տարօնեցիէն տարբեր մէկը կը նկատեմ, նոյն ատեն ընդունելով որ սարկաւազն ալ Տարօնեցիէն նուազ արուեստագէտ մը չէ: